ԼՈԳՈՊԵԴԻԱ 360°

Մասնագիտություն, որը փոխում է կյանքի որակ

Գիտական և ծառայությունների զարգացման թեզիսների ներկայացման ուղեցույց

Նախաբան

Լոգոպեդների Հայկական Ասոցիացիան կազմակերպում է «ԼՈԳՈՊԵԴԻԱ 360°» համաժողովը, որը միավորելու է լոգոպեդների, հետազոտողների, առողջապահության ոլորտի մասնագետների, ուսանողների՝ քննարկելու լոգոպեդիայի ոլորտի արդի հարցերը և զարգացումները:

Ասոցիացիան միավորում է Հայաստանում և արտերկրում գործող լոգոպեդներին և հանձնառու է մասնագիտության զարգացմանը, պրակտիկայի որակի բարձրացմանը և գիտահեն մոտեցումների տարածմանը: «ԼՈԳՈՊԵԴԻԱ 360°»-ը հանդիսանալու է հարթակ՝ լոգոպեդիայի ոլորտում հետազոտությունների, մասնագիտական փորձի և լավագույն փորձի փոխանակման համար:

Համաժողովի գիտական հանձնաժողովը ընդգրկում է լոգոպեդիայի ոլորտի մասնագետների և հետազոտողների Հայաստանից և արտերկրից:

Ծրագրում կընդգրկվեն առաջատար փորձագետների հիմնական զեկույցները, ինչպես նաև պաստառային ցուցադրումներ և կարճ զեկույցներ, այդ թվում նաև ներկայացրած աբստրակտների բանավոր ներկայացումներ՝ 10 րոպե տևողությամբ: Ամբողջական տեղեկատվությունը կհրապարակվի Ասոցիացիայի կամ Գիտաժողովի կայքում:

Թեզիսների / ամփոփագրերի ընդունման հայտարարություն

Հրավիրում ենք ներկայացնել թեզիսներ/ամփոփագրեր՝ տասը րոպե տևողությամբ բանավոր կամ պաստառային ձևաչափով ներկայացման հնարավորությամբ:

Ամփոփագրերի կատեգորիաները հետևյալն են.

- **«Գիտական» —** լոգոպեդիայի ոլորտին վերաբերող ավարտված կամ ընթացիկ հետազոտությունների համար:
- **«Ծառայության զարգացում» —** լոգոպեդական ծառայությունների բնագավառում նորարարական զարգացումների համար, որոնք կարող են օգտակար լինել այլ մասնագետների համար:

- **«Մասնագիտական փորձ» —** կլինիկական պրակտիկայում առաջացած մարտահրավերների և դրանց լուծումների փորձով կիսվելու համար:

Գիտական և ծառայության զարգացման թեզիսների հիմնական տեղեկատվություն

Ներկայացման վերջնաժամկետ	05.10.2026 թ.
Ներկայացման հարթակ	Բոլոր թեզիսները պետք է ներկայացվեն Ասոցիացիայի կողմից նշված առցանց հայտագրման համակարգի միջոցով: • Եթե արդեն ունեք հաշիվ համակարգում, մուտք գործեք և ներկայացրեք թեզիսը: Հակառակ դեպքում՝ ստեղծեք հաշիվ տրամադրված հղումով: • Մասնակցության գրանցման համար այցելեք Համաժողովի պաշտոնական կայքը:
Հարցեր	Ամփոփագրի հետ կապված հարցերի դեպքում գրեք info.armspeechther@gmail.com էլ. փոստի հասցեին:
Լեզու և Ուղեցույցներ	Թեզիսները պետք է շարադրված լինեն հստակ և քերականորեն ճիշտ հայերենով (կամ, ըստ պահանջի, անգլերենով): Խուսափեք ավելորդ մասնագիտական տերմինաբանությունից, քանի որ լսարանում կան նաև ոլորտից դուրս մասնագետներ:

Ամփոփագիր ներկայացնելու ուղեցույցներ

- **Ձևանմուշ.** Ամփոփագրերը պետք է ներկայացվեն բացառապես նշված առցանց ձևանմուշի միջոցով:
- **Ներկայացման ձևաչափ.** Բանավոր կամ պաստառային: Հանձնաժողովը կուսումնասիրի ներկայացված թեզիսը, կորոշի ընդունելիության հարցը և կհատկացնի ներկայացման ձևաչափը՝ հաշվի առնելով հեղինակի նախապատվությունը:
- **Հեղինակներ.** • Ներկայացնող հեղինակը պետք է ներկա գտնվի համաժողովին և անձամբ ներկայացնի թեզիսը:
  • Ներկայացնող հեղինակը պատասխանատու է ապահովելու, որ բոլոր համահեղինակները հաստատեն թեզիսի բովանդակությունը մինչև ուղարկումը:
- **Վերջնաժամկետ.** Ուշացած ներկայացումները չեն դիտարկվի: Տեխնիկական խնդիրների դեպքում գրեք կազմակերպիչներին մինչև վերջնաժամկետը:

Թեզիսի ներկայացման պահանջները

Ինչպես գիտական, այնպես էլ ծառայության զարգացման թեզիսների համար անհրաժեշտ կլինի տրամադրել հետևյալ տեղեկությունները.

- **Կոնտակտային տվյալներ.** Կոչում, անուն-ազգանուն, էլեկտրոնային փոստի հասցե, բջջային հեռախոսահամար (երկրի կոդով), կազմակերպություն և երկիր:
- **Թեզիսի տեսակ.** Գիտական, ծառայության զարգացման կամ մասնագիտական փորձ:
- **Ներկայացման տեսակ.** Բանավոր կամ պաստառային:
- **Վերնագիր.** Ընդհանուր առմամբ մինչև 15 բառ, գրված նախադասության ձևաչափով (sentence case):
- **Բովանդակություն.** Նախապատմություն և նպատակներ, մեթոդներ, արդյունքներ, եզրակացություններ (ընդհանուր՝ առավելագույնը 300 բառ):
- **Ազդեցություն.** Ինչպես այս հետազոտությունը կբարելավի կլինիկական պրակտիկան կամ հաճախորդների կյանքի որակը (ընդհանուր՝ առավելագույնը 50 բառ):

Թեզիսի կատեգորիաներ.

1. Մանկական տարիքի խոսքի, լեզվի և հաղորդակցման խանգարումներ: Վաղ միջամտություն
2. Խոսքի սահունության, ձայնի և շնչառության խնդիրների հայտնաբերում, շտկում և վերականգնում
3. Թվային տեխնոլոգիաներ և արհեստական բանականություն
4. Չափահասների խոսքի, լեզվի և հաղորդակցման գործառույթների նեյրովերականգնում
5. Դիսֆագիա և սնուցման խանգարումներ
6. Այլընտրանքային հաղորդակցման միջոցներ և AAC տեխնոլոգիաներ
7. Միջառարկայական համագործակցություն
8. Ապացուցողական պրակտիկա և հետազոտություն
9. Մասնագիտական զարգացում և առաջնորդություն

Ներկայացման միջանկյալ պայմաններ թեզիսների համար

- Ես հաստատում եմ, որ նախապես ուսումնասիրել եմ այս թեզիսը, և բոլոր տեղեկությունները ճշգրիտ են: Ընդունում եմ, որ թեզիսի բովանդակությունը հնարավոր չի լինի փոփոխել կամ ուղղել ներկայացման վերջնաժամկետից հետո, և գիտակցում եմ, որ այն կհրապարակվի հենց այն տեսքով, ինչպես ներկայացվել է:
- Թեզիսի ներկայացումը հանդիսանում է բոլոր հեղինակների համաձայնությունը դրա հրապարակմանը (օրինակ՝ Ասոցիացիայի կայքում, ծրագրերում, թեզիսների ժողովածուում և այլ նյութերում):
- Ներկայացնողը երաշխավորում է, որ իր տրամադրած տեղեկություններից ու բովանդակությունից ոչ մի մաս, ինչպես նաև դրա հրապարակումը կազմակերպիչների կողմից՝ ինտերնետում կամ այլուր, չի խախտում երրորդ կողմերի որևէ իրավունք, ներառյալ գաղտնիության և/կամ մտավոր սեփականության իրավունքներով:
- Հաստատում եմ, որ համակարգում պահպանված կոնտակտային տվյալները վերաբերում են ներկայացնող հեղինակին, ում կտեղեկացվի թեզիսի կարգավիճակի մասին: Ներկայացնող

հեղինակը պատասխանատու է մյուս համահեղինակներին թեզիսի կարգավիճակի մասին տեղեկացնելու համար:

- Հասկանում եմ, որ ներկայացնող հեղինակը պետք է լինի գրանցված մասնակից:
- Կազմակերպիչները իրավունք են վերապահում հեռացնել հրապարակումից և/կամ ներկայացումից ցանկացած թեզիս, որը չի համապատասխանում վերոնշյալ պահանջներին:
- Հասկանում եմ, որ պետք է ընտրեմ կոնկրետ կատեգորիա իմ թեզիսի հատկացման համար: Թեև գնահատման հանձնաժողովը կաշխատի հարգել այս ընտրությունը, դա երաշխավորված չէ: Հանձնաժողովը իրավունք է վերապահում փոփոխել այն կատեգորիան, որով թեզիսը սկզբնապես ներկայացվել է:

Օգտագործման թույլտվության պայմաններ

Նստաշրջանները կարող են հեռարձակվել կամ ձայնագրվել: Համաժողովում ելույթ ունենալու պայման է հանդիսանում կազմակերպիչներին և նրանց հանձնարարությամբ գործող երրորդ կողմերին տալ Ձեր համաձայնությունը՝

- Ձայնագրելու Ձեր մասնակցությունը, արտաքին տեսքը և ելույթը՝ կապված համաժողովի հետ:
- Օգտագործելու, խմբագրելու, հրապարակելու և տարածելու այս ձայնագրություններն ու նյութերը՝ ամբողջությամբ կամ մասնակիորեն, ներառյալ Ասոցիացիայի հարթակում կամ այլ կայքերում տեղադրելը:

Հաջորդ քայլերը

- Հայտն ուղարկելուց հետո Դուք կարող եք վերադառնալ համակարգ և խմբագրել Ձեր ներկայացումը մինչև ներկայացման վերջնաժամկետը: Այդ ամսաթվից հետո որևէ խմբագրում այլևս հնարավոր չի լինի:
- Դուք կստանաք Ձեր հայտի ստացման հաստատում:
- Ներկայացնող հեղինակները պետք է լինեն գրանցված մասնակիցներ: Ներկայացման և պաշտոնական հրապարակումներում ընդգրկվելու համար ծրագրավորվելու են միայն այն հեղինակների թեզիսները, ովքեր ժամանակին վճարած կլինեն գրանցման վճարը:
- Ասոցիացիան ծածկում է Երևանում ելույթ ունեցող արտերկրից ժամանած ՀԻՄՆԱԿԱՆ ԶԵԿՈՒՑՈՂՆԵՐԻ ծախսերը (օրինակ՝ ճանապարհածախս, կացարան, ապրուստի ծախսեր):
- Ելույթների նախապատրաստման հրահանգները էլեկտրոնային փոստով կուղարկվեն ներկայացնող հեղինակին:
- Թեզիսի ներկայացումը նշանակում է Ձեր համաձայնությունը, որ թեզիսը, գնահատումից հետո ընդունվելու դեպքում, կհրապարակվի պաշտոնական համաժողովային հրապարակումներում:

Կազմակերպիչ՝ Լոգոպեդների Հայկական Ասոցիացիա
Վայր՝ Երևան, Հայաստան